Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №1-2 (34-35) 2018 Гуманитарные науки

ՈՉ ԽՈՍՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Խուգեյան Ա.Վ.
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, ՀՀ ,ք. Երևան, Տիգրան Մեծի 7
khugeyan@mail.ru

Վերլուծվել են նախադպրոցականների հաղորդակցման առանձնահատկությունները ինչպես խոսքային, այնպես էլ ոչ խոսքային ձևերի ենթատեքստում: Նախադպրոցական տարիքը, հանդիսանալով խոսքի զարգացման զգայունակ փուլ, ապահովվում է երեխայի զարգացման հետագա հաջող ընթացքը՝ ի հաշիվ հաղորդակցական ունակությունների զարգացման: Ոչ խոսքային հաղորդակցման ձևերը մեծ հետաքրքրություն են առաջացնում երեխաների շրջանում, քանի որ գործողությունների նոր տարրեր են պարունակում, որոնք երեխաները կատարում են առանց խոսելու:

Բանալի բառեր – Նախադպրոցական տարիք, երկխոսություն, ոչ խոսքային հաղորդակցում, խաղեր, վարժություններ:

Ներկայացված է տպագրության 10.06.2018

Երեխայի հոգեկանի զարգացումը սկսվում է հաղորդակցումից: Այն սոցիալական ակտիվության առաջին տեսակն է, որն ի հայտ է գալիս օնտոգենեզում և որի շնորհիվ նորածինն անհատական զարգացման համար ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն: Շփման ժամանակ սկզբում ընդօրինակման, այնուհետև բառային հաղորդակցման հիման վրա ձեռք է բերվում երեխայի կյանքի հիմնական փորձը [1]: Հաղորդակցական և հատկապես երկխոսական կարողությունների ձևավորման անհրաժեշտությունը նախադպրոցական տարիքում առավել ակնհայտ է դառնում, երբ շփման տարրական ունակությունների բացակայությունը հանգեցնում է շփման դժվարությունների և տագնապայնության առաջացման [2]:

Երեխաների խոսքային հաղորդակցման հարստացմանը և դրա բնական զարգացմանն օգնում են հատկապես հաղորդակցման ոչ խոսքային միջոցները: Կարևոր է, որ երեխան տեղեկատվությունն ընդունի համարժեք կերպով, հասկանա զրուցակցի զգայական, բարեկամական վերաբերմունքը: Ոչ խոսքային հաղորդակցական միջոցների ճիշտ ընտրությունը հնարավարություն է տալիս հասակակիցների և մեծահասակների հետ հարաբերություններ հաստատելու, համապատասխան վարք դրսևորելու, սոցիալական արդյունավետ փոխհարաբերություններ հաստատելու համար: Ոչ խոսքային հաղորդակցման միջոցները շատ տարբեր են: Մարդկանց անմիջական շփումը տեղի է ունենում ոչ միայն խոսքի, այլև ոչ խոսքային միջոցների շնորհիվ՝ դիմախաղ, մնջախաղ, մարմի դիրք, ձայնի ուժգնություն, արտահայտչականություն, տոնայնություն և այլն: Ոչ խոսքային հաղորդակցման արտահայտչամիջոցները կարող են խոսել զրուցակցի դաստիարակվածության, տրամդրության, սպասելիքների և ցանկությունների

մասին: Հանդիսանալով զգացմունքների բաղադրամաս՝ ոչ խոսքային միջոցները հավաստիորեն վկայում են մարդու ներքին հոգեբանական վիճակի մասին[3]:

Ավագ նախադպրոցականների մոտ ոչ խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորման համար առանձնացվում է աշխատանքի 2 ուղղություն.

1. Դրական հարաբերությունների և պատկերացումների ձևավորում ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների հետ, ապրումակցման ձևավորում:
2. Զգացմունքների արտահայտման միջոցների ձևավորում:

Երեխաների հետ աշխատանքում կարող են ընդգրկվել **խաղեր,** որոնք լայնորեն կիրառվում են ոչ միայն երեխաների հետ հոգեշտկողոկան և կանխարգելիչ աշխատանքների ժամանակ, այլև մանկապարտեզի մանկավարժական համակարգում[4]:

Խաղային գործունեության կազմակերպման ընթացքում լուծվում են հետևյալ կրթադաստիարակչական խնդիրները.

- ✓ Առաջացնել դրական վերաբերմունք սեփական մարմնի նկատմամբ, սովորեցնել այն ճիշտ կառավարել
- ✓ Զարգացնել ոչ խոսքային հաղորդակցման միջոցները՝ ժեստեր, միմիկա, շարժուձև, դիմախաղ
- ✓ Զարգացնել իրար հասկանալու ունակություններ
- ✓ Սովորեցնել հասկանալ դիմացինի զգացմունքային վիճակը և դրան խոսքային և ոչ խոսքային պատասխաններ տալ
- ✓ Դաստիարակել վստահություն միմյանց հանդեպ
- ✓ Զարգացնել երևակայությունը, պատկերային մտածողությունը:

Խաղերի և վարժությունների անցկացման կանոնները են. խաղ-վարժությունների ներառում մանկապարտեզի մանկավարժական գործընթացում, պարզից բարդ սկզբունքի պահպանում,խաղի կանոնների հստակ պահպանում,երեխաների հնարավոր ռեակցիաների և խաղի արդյունքների կանխատեսում,խաղի նկատմամբ զգայական հետաքրքրության մշտապես պահպանում:

Խաղերի կազմակերպման համար անհրաժեշտ դիդակտիկ նյութեր են. դիմակներ, գնդակ, խաղաքարտեր, կախարդական փայտիկ, քարտ-ազդանշաններ,սյուժետային նկարներ,թուղթ, մատիտներ,ձայնարկիչ, բնության ձայների ձայնագրություններ

Խաղի կազմակերպման ձևերն են. խաղերի և վարժությունների իրականացում պարապմունքների ընթացքում,խաղի անցկացում զույգերով, փոքր խմբերով,խաղի անցկացում ամբողջ խմբի հետ,խաղի կազմակերպում ինքուրոյն գործունեության ժամանակ:

Երեխաների համար ոչ խոսքային հաղորդակցման միջոցներին տիրապետելը բավականին դժվար գործընթաց է, և դրանց իրագործումը պետք է ուղեկցվի մի շարք վարժությունների համակարգով, օրինակ՝ կնճռոտել ճակատը, բարձրացնել հոնքերը,կիտել հոնքերը,սեղմել շուրթերը,կկոցել աչքերը: Վարժությունների հետ մեկտեղ կարելի է կիրառել նաև միմիկական վարժանքներ.երեխաները մռայլվում են ինչպես աշնանային ամպ, բարկացած մարդ, ժպտում են արևի պես, վախենում են գայլ տեսած նապաստակի պես:

Ներկայացնենք նաև մի քանի խաղերի օրինակներ, որոնք ուղղված են ոչ խոսքային հմտությունների զարգացմանը. «Ողջույն». երեխաներն իրար ողջունում են տարբեր ժեստերով,«Կենդանիների թատրոն». այս խաղի միջոցով երեխաները

«վեր են ածվում» տարբեր առարկաների, կենդանիների՝ դրանք ներկայացնելով դիմախաղի և մարմնի տարբեր դիրքերի միջոցով: «Պար». խաղի ժամանակ երեխաներին տալիս ենք հետևյալ թեմաներից որևէ մեկը և միացնում երաժշտություն. թիթեռնիկի պար, նապաստակի պար, ձիուկի պար,փղիկի պար, ծառի պար և այլն:

Նախադպրոցականների ոչ խոսքային ունակությունների զարգացումը պետք է իրականանա միմյանց հանդեպ ուշադրության, փոխօգնության և հարգանքի պահանջմունքի հիման վրա: Ոչ խոսքային հաղորդակցման ունակությունները զարգանում են շրջակա միջավայրի հետ ծանոթացման, ինչպես նաև հասակակիցների և մեծահասակների հետ շփման ընթացքում, նաև՝ սեփական փորձի հիման վրա:

Հաղորդակցման նման ձևի տիրապետելու արդյունքում երեխան հնարավորություն է ունենում հաղթահարելու շփման ընթացքում ի հայտ եկած մի շարք դժվարություններ, ինչպիսիք են՝ եսակենտրոնությունը, շփման դժվարությունները, սոցիալականացման խնդիրը:

Այսպիսով, նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման խնդիրներ լուծելու ճանապարհին անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների զարգացման առանձահատկությունները, նախասիրությունները, որպեսզի խոսքը երեխայի համար ծառայի ոչ որպես մեծահասակներին գոհացնելու, այլև սեփական ցանկությունները, մտքերն ու զգացմունքները արտահայտելու միջոց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Иванова В.П., Левшина Н.И. Развитие невербальных средств коммуникации у старших дошкольников // Успехи современного естествознания. – 2013. – № 10. – С. 159-160
2. Клюева Н.В., Касаткина Ю.В. Учим детей общению. Популярное пособие для родителей и педагогов, Ярославль: Академия развития, 1997. 240 с.
3. Дементьева Е.А., Черепкова Н.В. Значение интонации, как невербального средства общения, для развития речи детей // Материалы VI Международной студенческой электронной научной конференции «Студенческий научный форум», Москва, 2014г.
4. Яценко Т.Н. Нетрадиционные формы работы с детьми по формированию связной речи // Современные научные исследования и инновации. 2011. № 6

РЕЗЮМЕ

НЕВЕРБАЛЬНЫЕ СРЕДСТВА В ПРОЦЕССЕ КОММУНИКАЦИИ ДЕТЕЙ

Хутеян А.В.

В статье были проанализированы и представлены особенности общения дошкольников в контексте как словесных, так и невербальных форм общения. Дошкольный возраст, являющийся сензитивным периодом развития речи, обеспечивает успех развития ребенка за счет развития навыков общения. Невербальное общение вызывает большой интерес у детей, поскольку содержат новые элементы действия, которые дети должны повторить бес слов.

SUMMERY

NON VERBAL MEANS IN THE PROCESS OF CHILDREN'S COMMUNICATION

Khugeyan A.V.

The peculiarities of preschoolers' communication have been analyzed and presented in the context of both verbal and non-verbal communication forms. Preschool age, being a sensitive stage of speech development, provides the future success of child's development due to the development of communicative skills. Non-verbal communicative forms arouse great interest among children because they contain new elements of actions, which children should do without speaking.